«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա ----------Շեքսպիրի <<Համլետի>> ուսուցման բարոյադաստիարակչական նշանակությունը

ԱՌԱՐԿԱ ---------- ----------Գրականություն

ՀԵՂԻՆԱԿ ----------Վարդուհի Էդուարդի Գեղամյան

ՄԱՐԶ ----------Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ----------Վաղարշապատի թ. 10 ավագ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Բովանդակություն ---------- 2

2. Ներածություն ---------- 3

3. Գրականության հսկան ---------- 6

4. <<Համլետ>> ողբերգության բարոյադաստիարակչական նշանկությունը ---------- 8

5. Եզրահանգում ---------- 16

6. Օգտագործված գրականություն ---------- 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդը միայն դաստիարակությամբ է մարդ դառնում: Նա այն է, ինչ դարձնում է նրան դատիարակությունը:

Ի. Կանտ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Ներկա ժամանակներում, երբ շատ են փոխվել մարդկային արժեքները, երբ կարծես խաթարվել է կապը ընտանիքի և դրպրոցի միջև՝ երեխայի դաստիարակության հարցում, երբ սովորողները, գրքեր ընթերցելու փոխարեն, նախընտրում են ֆիլմերն ու սերիալները, անհրաժեշտություն է առաջանում համաշխարհային և հայ գրականության մեծագույն արժեքների դասավանդման միջոցով երեխայի համար ընթերցանությունը դարձնել ցանկալի զբաղմունք, որն էլ կնպաստի նրա զարգացմանն ու արժեհամակարգի ձևավորմանը: Գրական ստեղծագործությունների դրական և բացասական հերոսները իրենց արարքներով, մտքերով ազդում են երեխայի հոգեկան աշխարհի վրա և սովորեցնում ճիշտ ապրելու բանաձևը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ: Տվյալ հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուշադրություն հրավիրել մարդու ներաշխարհի, նրա էության դրական և բացասական գծերի վրա, օգնել՝ ճիշտ կողմնորոշվելու բարու և չարի պայքարով ընթացող այս կյանքում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ: 1. Ներկայացնել Շեքսպիրին՝ որպես գրող:

2. Լուսաբանել <<Համլետ>> ողբերգության բարոյադաստիարակչական նշանակությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ և ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտությունը տեսական նշանակություն ունի թեմայի շուրջ ուսումնասիրություններ կատարողների համար և գործնական նշանակություն՝ հանրակրթական դպրոցի գրականության ուսուցիչների համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: Զրույց, խմբային աշխատանք, դերային խաղ, վերլուծություն, համեմատություն:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ: Հետազոտությունը կառուցված է ներածությունից, հիմնական մասից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ընդհանուր ծավալը՝ 16 համակարգչային էջ:

Ո՞րն է գրականության դերը հասարակության կյանքում:

Այն տեսակետը, թե արվեստն ու գրականությունը կյանքում ոչ մի իրական նպատակ չեն հետապնդում, այսինքն՝ <<արվեստն արվեստի համար> տեսությունը, կարծում եմ, ոչ միայն ճիշտ չի ներկայացնում, այլև նսեմացնում է այն հսկայական ազդեցությունը, որն իրականում ունի գրականությունը հասարակական կյանքի վրա:

Գրականությունը կոչված է ժողովրդին ծառայելու մեծ նպատակին, ուստի այն չի կարող գաղափարական նպատակներից զերծ լինել: Արվեստագետը նախ և առաջ պետք է լինի իր դարաշրջանի, ժողովրդի և երկրի զավակը.

Թե ուզում ես երգդ լսեն,

Ժամանակիդ շունչը դարձիր. . . .

Է. Չարենց

Սակայն մեծ արվեստագետը չի պարփակվում միայն իր ժամանակի մեջ։

Իսկական հանճարները հասնում են այնպիսի խոր ընդհանրացումների, ստեղծում են այնպիսի վառ բնավորություններ, որոնց ճշմարտացիությունը տվյալ դարաշրջանի սահմաններով չի սպառվում։

Գրականության այս համապարփակ, ժամանակներ ու սահմաններ չճանաչող, դերն է հենց, որ նրան առանձնահատուկ է դարձնում դպրոցում դասավանդվող հանրակրթական առարկաների շարքում։

Գրականության դասավանդումը տարբերվում է դպրոցում դասավանդվող մյուս առարկաներից մի շարք առանձնահատկություններով։ Կարդալով, ընկալելով, վերլուծելով ու մեկնաբանելով գրական ստեղծագործությունը, սովորողները յուրահատուկ երկխոսության մեջ են մտնում ստեղծագործության, գրողի ու կերպարների հետ, ձեռք են բերում գրավոր և բանավոր խոսքի կարողություններ, վերլուծական, ստեղծագործական, քննադատական միտք, երևակայություն։ Գրականությունը նպաստում է նաև սովորողի գեղագիտական ճաշակի զարգացմանը։

Այս ամենի հետ միասին գրականությունը մի շատ կարևոր առանձնահատկություն էլ ունի. այն ձևավորում է աշակերտի արժեհամակարգը, կերտում նրա մարդկային տեսակը, քանի որ մարդը այն է, <<ինչ դարձնում է նրան դաստիարակությունը>>։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՍԿԱՆ

Ահով ու դողով եմ մոտենում գրական այն
հսկա կաղնուն, որի մեջ միանում ու որից
բաժանվում են գրականության բոլոր ճանապարհները։
Վ. Գյոթե

Վերածնունդն Անգլիայում սկիզբ առավ տասնվեցերորդ դարի կեսին և գագաթնակետին հասավ նույն դարի վերջին և տասնյոթերորդ դարասկզբին։

Անգլիական Վերածնության խոշորագույն նվաճումը գեղարվեստական զգրականությունն է, և դրա առավել հարուստ բաժինը դրամատուրգիան է։

Վերածնության դրամատուրգիան ծաղկման է հասնում տասնվեցերորդ դարի վերջին տասնամյակներում։ Հանդես են գալիս բազմաթիվ տաղանդավոր դրամատուրգներ, որոնք Շեքսպիրի անմիջական նախորդներն էին։ Նրանք արդեն ձևավորել էին դրամատիկական հիմնական տեսակները /ողբերգություն, կատակերգություն, պատմական քրոնիկոն/։

Շեքսպիրն օգտագործեց այդ բոլորը, բայց նա դրանք հասցրեց նոր մակարդակի։ Նա դարձավ նոր ժամանակի ռեալիստական բարձրարվեստ դրամատուրգիայի կնքահայրը։
Անգլիան, ի դեմս Շեքսպիրի, ստեղծեց իր ազգային ռեալիստական բարձրարվեստ դրամատուրգիան։ Այդ է Շեքսպիրի նշանակությունը անգլիական գրականության մեջ։
Սակայն շեքսպիրյան ժառանգության նշանակությունը չի սահմանափակվում սոսկ ազգային շրջանակներում։ Այն վաղուց դարձել է համաշխարհային, համամարդկային սեփականություն։

Շեքսպիրն իր երկերը գրելիս օգտվել է անտիկ աշխարհի, միջնադարի և Վերածննդի փիլիսոփայական, պատմագրական, գեղարվեստական գանձարանից, մայրենի բանահյուսությունից, իր ժամանակի իրադարձություններից։ Անցյալ ու արդի այդ կուտակումները մշակելով սեփական մտքի ու երևակայության քուրայում՝ Շեքսպիրն ստեղծել է դրամատուրգիական ու պոետական հրաշալի ձուլվածք, հանճարին արժանի ժառանգություն։

Իր ստեղծագործական կյանքի երկրորդ շրջանում /1601 – 1608 / Շեքսպիրը գրել է

հանճարեղ ստեղծագործություններ՝ <<Համլետ>>, <<Օթելլո>>, <<Լիր արքա>>, <<Մակբեթ>> և այլն։ Դրանցում պատկերված են բացառիկ անհատականություններ՝ իրենց խորունկ, զորեղ զգացումներով, անհատապաշտական և մարդասիրական մղումների տատանումներով։

Յուրաքանչյուր ողբերգության մեջ Շեքսպիրը բացահայտում է անհատի ներաշխարհին և մարդկային հասարակությանը վերաբերող անվիճելի ճշմարտություններ։

Հայ իրականության մեջ Շեքսպիրի ստեղծագործությանը առաջինն անդրադարձել է Հովսեփ Էմինը։ Հայերեն /աշխարհաբար/ առաջին թարգմանությունը տպագրվել է 1853 թվականին <<Արփի Արարատյան>> հանդեսում՝ Կ. Տերտերյանի թարգմանությամբ։ Շեքսպիրի անգերազանց թարգմանիչ է Հովհաննես Մասեհյանը։

<<ՀԱՄԼԵՏ>> ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Շեքսպիրը դարձել է մի չափ՝ ազգերի զարգացման աստիճանը որոշելու համար: Եթե մի ժողովուրդ նրան չի թարգմանում, կնշանակի տգետ է, եթե չի հասկանում, կնշանակի տհաս է, եթե մի լեզու նրա վրա չի գալիս, կնշանակի՝ տկար է:

Հովհ. Թումանյան

Շեսքպիրի ստեղծագործությունը Վերածնության դարաշրջանի ռեալիստական դրամատուրգիայի գագաթն է, մի նոր փուլ դասական հնադարի դրամատիկական գրականությունից հետո:

Ասվում է, որ Շեքսպիրն իր ցանկացած երկի համար ունեցել է սկզբնաղբյուր:

Կա տեսակետ, ըստ որի՝ <<Համլետ>>-ի դիպաշարի ակունքը Ք. ծ. ա. հինգերորդ դարի հույն ողբերգակ Էսքիլեսի <<Օրեստիա>> եռագրությունն է, իսկ Համլետ անունը նրա երկվորյակ զավակներից մեկի՝ մահացած տղայի՝ Համնետի անվան տառադարձումն է:

Շեքսպիրն այդ նյութից ստեղծել է մի բացառիկ գլուխգործոց, որը երբեք չի հնանում: Սկզբից մինչև վերջ հեղինակն հասել է բովանդակային լարվածության և այդպես զարգացրել ողջ գործողությունը: Նրա միտքը իմաստուն է, ոճը սեղմ ու կատարյալ:

Ողբերգությունը լի է թևավոր խոսքեր դարձած մտքերով ու արտահայտություններով, հերոսների գործողությունները զարգանում են բնական ու տրամաբանական ընթացքով:

Միայն հանճարի կնիքը կրող ստեղծագործողը կարող է կերտել այնպիսի կերպարներ, որոնք մերկապարանոց դրական կամ բացասական չեն ընկալվում: Նրա բացասական հերոսները սոսկ բացասական հատկանիշների կրող չեն, այլ ամբողջական մարդիկ են, ովքեր ունեն նաև դրական կողմեր: Իսկ դրական հերոսների կերպարները բարդ են ու հագեցած հոգեկերտվածքի զանազան դրսևորումներով: Նրանցում ամբողջական մարդն է՝ որոշակի գաղափարի կամ զգացմունքի վառ ու նպատակային արտահայտությամբ: Ինչպես դրական, այնպես էլ բացասական կերպարները երևում են բնականոն զարգացման մեջ:

Շեքսպիրի ամբողջ ստեղծագործության միջով անցնում է մարդկային անհատի ազատագրման իդեալը։ Նրա՝ հումանիստական տենչերով օժտված հերոսները հակասության մեջ են տիրող հասարակական, քաղաքական բիրտ, հակամարդկային, հակահումանիստական իրականության հետ։ Այս խնդիրը գեղարվեստական հզոր թափով մարմնավորված է հատկապես <<Համլետ>> ողբերգության մեջ։

Հայտնի է, որ ողբերգությունը դրամատիկական ժանրի հիմնական և հնագույն տեսակներից մեկն է։ Այն ծագել է հին Հունաստանում։ Ողբերգության մեջ հիմնականը գլխավոր հերոսի ճակատագիրն է։ Գլխավոր հերոսը հանդես է գալիս նոր իդեալներով, որոնք չեն համընկնում գոյություն ունեցող իրադրության հետ, և պայքարը դառնում է անխուսափելի։

Այսպիսի պայքարող հերոս է Շեքսպիրի <<Համլետ>> ողբերգության համանուն հերոսը՝ Համլետը՝ Դանիայի թագաժառանգը։ Նրա կերպարը շատ գրավիչ և ոգեվորող է մատաղ սերնդի համար։ Ըմբոստ ոգին, կեղծիքի և անարդարության դեմ անզիջում պայքարը Համլետի կերպարը դարձնում են ողբերգական և, միևնույն ժամանակ, սիրելի ընթերցողների համար։

<<Համլետ>> -ը բարդ ստեղծագործություն է։ Ամբողջ թատերգությունն ըմբռնելու համար աշակերտը պետք է անպայման ծանոթանա երկի բովանդակությանը։

Աշակերտներին հինգ խմբի բաժանելով՝ կարելի է յուրաքանչյուր խմբին հանձնարարել ծանոթանալ ողբերգության արարներից մեկին և ներկայացնել այն։

Առաջին արարում հայտնի է դառնում թագավորի մահվան պատճառը։

Պահնորդ զինվորները զրուցում են իրենց աչքին երևացող Ուրվականի մասին, որ շատ նման է նոր մահացած արքային, ում անունը, ինչպես որդու անունը, Համլետ է։ Իշխան Համլետի ընկերը՝ Հորացիոն, այդ մասին հայտնում է նրան,և ուրվականի հետ հանդիպումը բացահայտում է դավադրությունը։ Հոր ուրվականը Համլետին վրեժի է կոչում հանուն դանիական գահի անարատության ու պատմական արդարության։

Երկրորդ արարում բոլորը պտտվում են Համլետի շուրջը, փորձում են հասկանալ ու բացահայտել նրան, քանի որ նա փոքր-ինչ խենթ էր ձևանում՝ իր նպատակներին հասնելու համար։ Իշխանին հետևելու համար օգտագործում են Օֆելիային, որին սիրում էր Համլետը։ Պոլոնիոսը՝ Օֆելիայի հայրը, կարդում է նրա նամակները։ Կլավդիոս թագավորը պալատ է կանչում իշխանի ընկերներին, որ շարունակ Համլետի հետ լինեն և հսկեն նրան։

Եվ իշխան Համլետը հասկանում է , որ Դանեմարքան իր համար բանտ է։

Ամրոց են գալիս թափառական երաժիշտներ, որոնց խաղի միջոցով Համլետն ուզում է ստուգել իր կասկածները։

Համլետի վարքի մեջ բոլորը տարօրինակություններ են նկատում, բայց դա լոկ պաշտպանական միջոց էր, որով նա ուզում էր ավելի լավ ուսումնասիրել բոլորին և ճիշտ գործել։

Երրորդ արարում է թատրոնը թատրոնի մեջ տեսարանը /սա կարելի է աշակերտների դերասանական խաղի միջոցով ներկայացնել /։ Կլավդիոսը հասկանում է ամեն ինչ, որոշում Համլետին հեռացնել պալատից՝ նրան Անգլիա ուղարկելով։

Չորրորդ արարում թագավորը թագուհուն վերստին համոզում է, որ Համլետը վտանգավոր է դարձել բոլորի համար , և նրան պետք է հեռացնել։ Նա նաև Լաերտին՝ Պոլոնիուսի որդուն է լարում Համլետի դեմ՝ լուծելու հոր և քրոջ մահվան վրեժը։ Պետք է նշել, որ ողբերգության մեջ կան հայրեր և որդիներ, ու որդիների մեջ եփվում է վրեժը՝ իրենց հայրերի սպանության համար։

Հինգերորդ արարը գերեզմանոցում է։ Համլետը մենախոսում է պալատական նախկին ծաղրածու Յորիկի գանգի հետ, խոսում կյանքի անցողիկության մասին. <<Ավաղ, խեղճ Յորիկ։ - Հորացիո, ես նրան ճանաչում էի>>։

Դղյակի դահլիճներից մեկի գավիթում թագավորի և թագուհու առջև Համլետն ու Լաերտը մենամարտում են։ Թունավորված սուրը նախ խոցում է Համլետին, հետո նաև Լաերտին։ Թագուհին, առանց իմանալու, խմում է Համլետի համար նախատեսված թունավոր գինին և մեռնում։

Վիրավորված Լաերտը Համլետին հայտնում է դավադրության գաղտնիքը։ Համլետը թունավոր նետով խոցում է արքային։ Արքան մեռնում է։

Լաերտը ներում է Համլետին և մեռնում։

Համլետի մահը տեսնելով՝ նրա իսկական ընկերը՝ Հորացիոն, ուզում է թույն խմել ու նույնպես մեռնել, բայց իշխան Համլետը կանգնեցնում է նրան.

. . . Բարի Հորացիո, եթե այս ամենն անծանոթ մնա՝

Ինչ կորած անուն պետք է թողնեմ ես ինձանից հետո։

Եթե սրտիդ մեջ մի տեղ ունեմ ես՝

Զրկիր քեզ առայժմ երանությունից,

Եվ շնչիր դեռևս այս ժանտ աշխարհում,

Որ իմ պատմությունն ամենքին պատմես։

Համլետի կերպարի մեջ հատկանշականն այն է, որ նա հանդես է գալիս որպես հասարակական ընդհանուր ձգտումների կրող և ոչ թե սոսկ նեղ անձնական շահերի պաշտպան։ Սակայն, որպես ողբերգության ժանրային հիմնական գիծ, պետք է կործանվի գլխավոր հերոսը, որովհետև նա ո՛չ կարող է հրաժարվել իր իդեալներից, ո՛չ էլ այնքան ուժեղ է դեռևս, որ կարողանա պայքարել համատարած կեղծիքի ու անօրենության դեմ։

Վիտենբերգի համալսարանի ուսանող Համլետը, Դանիա վերադառնալով, անպատմելի դեպքեր է տեսնում։ Դանիայի թագուհին՝ Համլետի մայրը, որը նվիրվածության խոսքեր էր ասել իր ամուսնուն, սգո արցունքները դեռ չցամաքած, ամուսնացել էր հանգուցյալ ամուսնու եղբոր՝ Դանիայի այժմյան թագավոր Կլավդիուսի հետ։ Պալատում տեղի էին ունենում անզուսպ զվարճություններ, գիշերային խրախճանքներ, որն էլ Համլետին ափերից դուրս էր բերում։ Իսկ ամենից զարհուրելին այն է, որ հոր ուրվականը բացում է չարանենգ սպանության գաղտնիքը։

Նյութի ուսուցման ընթացքում, վերլուծելով գլխավոր հերոսի կերպարը, սովորողները գալիս են այն եզրակացության, որ Համլետը մտածող մարդու տիպ է, և նրա վիշտը առավել խոր պատճառներ ունի։ Նա նաև իր կենսափորձով է հասկացել, որ պալատական ողջ միջավայրը և աշխարհը ապականված են ստով, ստորությամբ, կեղծիքով ու դավաճանությամբ. <<Չկա մի սրիկա ամբողջ Դանիայում, որ մի անզգամ դավաճան չլինի>>։

Եվ սովորողները հասկանում են, որ իրականում Համլետի պայքարը չարի ու բռնության դեմ է։

Համլետն այն իդեալական հերոսն է, որի կերպարը ոգևորում է և հավատ է ստեղծում սեփական ուժերի նկատմամբ, մղում գործելու և պայքարելու հանուն ազատության ու արդարության։

Համլետի կերպարի ճիշտ վերլուծությունն ու բացատրությունը սովորողի մոտ կարող է դաստիարակել ուժեղ մարդ լինելու արժեհամակարգ, սովորեցնել հասնելու նպատակի իրականացմանը՝ հաղթահարելով անգամ անհաղթելի թվացող արգելքները։

Չընկրկել անհաջողությունների ու դժվարությունների առաջ և մնալ ազնիվ ու հավատարիմ իր խոսքին ու գործին։

Աշխարհը շատ է փոխվել, ոչինչ այլևս առաջվանը չէ. մարդը կորցրել է իր առաջնայի կերպը։

Համլետը վշտանում է՝ իր ազնիվ սերը վիրավորված տեսնելով: Խորապես վշտանում է՝ տեսնելով, որ ոչ մաքուր ընկերություն, ոչ մարդկային բարի վերաբերմունք, ոչ խիղճ ու պատիվ, ոչինչ անաղարտ չի մնացել: Կարելի է հատկապես ուշադրություն դարձնել այն հատվածին, որտեղ նա ընկերոջը՝ Գիլդենշտերնին առաջարկում է սրինգ նվագել: Եվ երբ ընկերը հրաժարվում է՝ ասելով, թե ինքը նվագել չգիտի, Համլետը զայրացած ավելացնում է <<. . . հիմա տես, թե ինչ անարժան արարած ես համարում դու ինձ, ուզում ես նվագել իմ վրա, այնպես ես ձևացնում, ոպես թե ծանոթ ես իմ լեզվակների հետ. ուզում ես իմ գաղտնիքը սրտիցս դուրս քաշել. ուզում ես ձայնս փորձել՝ սկսած ամենացած նոտայից մինչև ձայնաշարիս ամենաբարձրը. մյուս կողմից՝ շատ երաժշտություն և հրաշալի հնչյուն կա այս փոքրիկ գործիքի մեջ, և դու չես կարողանում նվագել: Մարդ աստծո, կարծում ես թե ես մի սրնգի չափ էլ չկամ: Անվանիր ինձ, ինչ գործիք որ կուզես. թեև կարող ես ինձ չարչարել, բայց վրաս նվագել չես կարող>> :

Նկատենք, որ չնայած Համլետի վիշտն ու վրիժառության մտադրությունը աձնական պատճառներից են ծագում, սակայն դրանք հեռու են անձնապաշտական կրքերից: Ինքն էլ խոստովանում է. <<Կյանքս ինձ համար մի ասեղ չարժե>> :

Հերոսի ողբերգությունը ստանում է համամարդկային բնույթ: Ինչպես ժամանակին Նարեկացին էր ողբում համայն աշխարհի մարդկանց մեղքերի համար:

Համլետը կանգնած է աշխարհի և մարդկության վշտերի առաջ.

Ժամանակն իր շավղից դուրս է սայթաքել,

Օ՜հ բախտ իմ դշխեմ,

Ինչու ծնվեցա, որ հենց ես ուղղեմ:

Սովորողների համար կարծում եմ , շատ հետաքրքիր կլինի համեմատության եզրեր գտնել համաշխարհային մեծության հեղինակի և հայ գրականության դասականների ստեղծագործությունների միջև: Արդեն նշվեց, որ Նարեկացու ողբերգությունը ևս գալիս էր ողջ մարդկության մեղսավոր լինելու գիտակցումից: Ավ. Իսահակյանի հերոսը՝ Մահարին ևս բողոքում էր մտերիմ ընկերոջ, սիրո, հայրենիքի և, ընդհանրապես մարդու, դավաճանությունից ու ապականությունից և յուրովի պայքարում ու ըմբոստանում էր չարիքի ու անարդարության դեմ:

Ես շատ սիրեցի իմ ընկերներին, և բոլոր մարդկանց մոտիկ ու հեռու,

Իժ դարձավ խայթող իմ սերը հիմա, թույն-ատելությամբ սիրտս է եռում:

Ստում եմ, ինչ որ սիրել եմ առաջ, ինչ որ տեսել եմ մարդկային հոգում.

Մարդկային հոգում՝ զազիր ու նանիր՝ համրել եմ հազար զարշանք ու նողկում:

Շեքսպիրի հերոսների / դրական թե բացասական / բնութագրական գծերից մեկն այն է, որ նրանք, օժտված լինելով մեծ կամքով, հզոր կրքերով, աննահանջ գնում են դեպի իրենց նպատակների կատարումը, ընտրած ճանապարհից ետ չեն կանգնում:

Համլետը հումանիստական վեհ իդեալների՝ բարու, գեղեցիկի, ազնվության, հոգեկան մաքրության մարմնացումն է: Այն միտքը, որով նա բնութագրում է իր հորը, կարելի է նաև իր մասին ասել. <<Մա՛րդ էր, Հորացիո, իր ամեն բանով: Մեկ էլ չեմ տեսնի նրա նմանը>> :

Համլետի կերպարի միջոցով սովորողները պետք է բացահայտեն իսկական մարդու, մեծատառով մարդու, Աստծո կերպարով և նմանությամբ ստեղծված մարդու կատարելատիպը. <<Ինչ հրաշակերտ է մարդը: Որչափ ազնիվ է նրա դատողությունը: Որչափ անսահման են նրա ընդունակությունները: Կազմվածքը և շարժումը որչափ բարեձև են և հիանալի: Կաց ու նիստով՝ կարծես մի հրեշտակ: Խոհականությամբ՝ կարծես մի աստված: Աշխարհի գեղեցկությունը: Կենդանիների կատարելատիպը>>: Նշեցինք, որ մարդու իդեալական կերպար էր համարում նա իր հորը: Եվ Համլետ արքայի ու նրա եղբոր՝ Կլավդիոսի կերպարների համեմատումը, փաստորեն, լավ և վատ մարդու համեմատումն է.

Նայիր դու այստեղ, նախ այս պատկերին, և ապա սրան,
Այս երկու եղբոր դիմագիրներին:
Տես ի՞նչ շնորք կա այս դեմքի վրա....
Մի համադրություն, մի ձև իսկապես,
Որի վրա կարծես ամեն մի աստված իր կնիքն է դրել՝
Իր հավաստիքը աշխարհին տալու, թե <u>ահա մի մարդ:</u>

Իսկ ներկայիս ամուսնուն բնորոշում է որպես ‹բորբոսնած մի հասկ, որ վարակում է առողջ եղբորը›:

Շեքսպիրից դեռևս հինգ դար առաջ Նարեկացին էր այդպես բնութագրել մարդուն.

. . . Բարեզարդեցիր խոսելու ձիրքով,

Շունչ ներարկելով՝ փայլ տվեցիր ինձ,

Մտքով ճոխացրիր, աճեցրիր խելքով և իմաստությամբ,

Հանճարով օժտված՝ զատորոշեցիր շնչավորներից,

Համադրեցիր բանական ոգով,

Պճնեցիր գոյով անձնիշխանական:

Սակայն, ավաղ, մարդը շատ է հեռացել իր նախասկզբնական կերպարից, որն էլ հենց հանճարների ողբերգության պատճառն է: <<Մարդը չի հիացնում ինձ, ոչ, և ոչ էլ կինը>> ,- ասում է Համլետը:

Թե հնար լիներ տեսնելու հոգիս,

Որքան պիտի այն երևար տգեղ. . .

Այսպես է ողբում Նարեկացին:

Մարդկայի հակադիր տեսակների մասին հետագայում Պարույր Սևակը պետք է գրեր.

Մարդ կա՝ ելել է շալակն աշխարհի,

Մարդ կա՝ աշխարհն է շալակած տանում...

Իսկական մարդու, կոնկրետ դեպքում Համլետի, ողբերգությունը այն բանի գիտակցումն է, որ իշխանությունը, պետությունը ապականվել են, հասարակությունն այլասերվել, մարդկային հոգեկան, բարոյական աշխարհը աղճատվել, և որ իր փայփայած իդեալները, որոնցով ապրում էր, ոգևորվում, խորտակվում են, իսկ ինքը ոչ կարող է հաղթահարել չարիքը, ոչ էլ հաշտվել, հարմարվել: Իսկ ով պետք է պայքարի այդ ամենի դեմ և փոխի ապականված աշխարհը, ինչպես պետք է անել այդ:

Սա է Համլետի ողբերգությունը: Նա պատրաստ է վրեժ լուծել , սակայն իրեն անզոր է զգում ամբողջը վերացնելու և փոխելու համար: Դրանում է լինել թե չլինելու իմաստը:

Լինել թե չլինել, այս է խնդիրը,

Որն է հոգեպես ավելի ազնիվ,

Տանել գոռ բախտի պարսաքարերը և սլաքները,

Թե զենք վերցնել ցավ ու վշտերի մի ծովի ընդդեմ,

Եվ, դիմադրելով՝ վերջ տալ բոլորին:

Բռնությունների, ոճիրների, չարի լեռնացած իշխանություն, մյուս կողմից՝ բարու, լավի, գեղեցիկի իդեալներով տոգորված անհատ. այս երկու թշնամական կողմերի մեջ է տեղի ունենում ողբերգական պայքարը: Հաղթել չի կարող, իդեալներից ու նպատակներից հրաժարվել չի կարող, հաշտվել, համակերպվել չի կարող. սա է Համլետի ողբերգությունը:

Դա մտածող մարդու ողբերգությունն է բոնության ու քմահաճույքի տիրապետության աշխարհում։

Եթե որևէ ստեղծագործություն կյանքի արտացոլքն է, այն չի կարող իր ազդեցությունը չունենալ ընթերցողի վրա, չի կարող չազդել մարդու հոգեկերտվածքի և արժեհամակարգի ձևավորման վրա։

Բացի այդ , շատ կարևոր է սովորողին համաշխարհային մեծության գրողների հետ ծանոթացնելը, նրանց հանճարեղ ստեղծագործությունները ուսումնասիրելը։ Դա նրանց հնարավորություն կտա կյանքում ավելի արագ ինքնադրսևորվելու, սեփական անձն արժևորելու և ինքնահաստատվելու։

Աշակերտը պետք է գիտակցի, որ Շեքսպիրի նման մեծության հետ յուրաքանչյուր շփումը հոգու տոն է, կյանքի դպրոց, և ցանկանա հետագայում էլ շարունակել ընթերցել համաշխարհային գրականության մեծերին։

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Արտասահմանյան գրականությունը շատ մեծ արժեքներ է ստեղծել, որոնք միշտ գեղագիտական հաճույք են պատճառել և հսկայական դեր խաղացել հետագա սերունդների հոգևոր կյանքում: Այսօր ևս նրանք պահպանում են իրենց արդիականությունը:

Շեքսպիրը, Գյեթեն, Բայրոնը, Բալզակը, Նարեկացին, Իսահակյանը, Սևակը և ուրիշներ, չնայած զանազան դարաշրջանների, ուղղությունների, տարբեր ժողովուրդների գրողներ են, մի ընդհանուր միտում են ունեցել. հաղթահարել հինը, իր դարն ապրածը, ձգտել են բարեփոխել կյանքը, ազնվացնել մարդուն:

Նրանց գրական ժառանգությունը մեծապես կնպաստի աշակերտների գեղագիտական ճաշակի, մտավոր աշխարհի, բարոյական վարքի ձևավորմանն ու հարստացմանը:

Իրար կողքի դնելով տարբեր ազգության պատկանող գրողների մտքերի միանման դրսևորումները՝ սովորողները կհասկանան,որ բարոյականությունը, ազնվություն, հավատարմությունը, բարությունը և այլ մարդկային բարձր հատկանիշներ ցանկալի են յուրաքանչյուր մարդու համար, ով այդ արժեքների կրողն է՝ անկախ ազգությունից: Կգիտակցեն, որ հանճարեղ ստեղծագործությունները ազգություն, սահմաններ ու ժամանակ չեն ճանաչում. դրանք ամենքինն են և հավերժական:

Այստեղ շատ կարևոր է ուսուցչի ճիշտ աշխատանքը: Հարկավոր է դասապրոցեսն այնպես կազմակերպել, որ աշակերտը չդառնա պատրաստի մտքերի ու կարծիքների սոսկ արտահայտող, այլ կարողանա վերլուծություններ ու մեկնաբանություններ անել, եզրահանգումներ կատարել ու արժևորել լավն ու դրականը:

Պետք է հասնել այն բանին, որ սովորողը ձգտի դառնալ մարդկային բարձր արժեքների կրող, մերժի վատն ու արգահատելին և լինի պիտանի քաղաքացի իր երկրի ու հասարակության համար:

Կարծում եմ, որ պատերազմի օրերին մեր հայրենիքի սահմանները պահող հերոս պատանիները մարդկային հենց այդ բարձր հատկանիշների կրողներն էին, և նրանց մայրերի հետ իրենց դաստիարակության գործում մեծ դեր են ունեցել նաև նրանց ուսուցիչները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայոց լեզու և գրականություն - ամսագիր, 2009, համար 5-6
2. Ս. Ա. Սողոմոնյան - Արտասահմանյան գրականություն։ Երևան, 1979
3. Էդ. Ջրբաշյան - Գրականության տեսություն : Երևան, 1980
4. Շեքսպիր - Երկեր։ Երևան, 1991